համատեքստում:

Բացի այդ, հետագայում կնքվելիք պայմանագրի շրջանակներում, պայմանագրային իրավահարաբերությունների կարգավորումներին համահունչ, ապրանքի անհամապատասխանության պարագայում, դրա պատասխանատվության ռիսկը կարող է կրել հենց մատակարարողը: Այսպիսով, վերոշարադրյալի համալիր վերլուծության արդյունքում դատարանը եզրահանգում է, որ բացակայում են թիվ ԵՔԲՄԱՊՁԲ-24/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.02.2024թ. թիվ 3 արձանագրության 1.2 կետով <<ԱՎԱԳ ՇԻՆ 1>> ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու հիմքերը:

Նման պայմաններում, երբ գործի լուծումը պայմանավորված չէ կողմերի ներկայացրած այլ փաստարկների գնահատմամբ, դատարանը գտնում է, որ այլ փաստարկների գնահատման դատավարական անհրաժեշտություն չկա: Միաժամանակ, հիմնական պահանջի մերժման դեպքում, դատարանը գտնում է, որ ածանցյալ պահանջը՝ թիվ ԵՔԲՄԱՊՁԲ-24/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.02.2024թ. թիվ 3 արձանագրության 1.3 կետով <<ԱՎԱԳ ՇԻՆ 1>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, նույնպես ենթակա է մերժման:

Անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հայցապահանջի մերժման պարագայում դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.[12]-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների /անգործության/ և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի .... դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել այն հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.[9]-րդ, 109-րդ, 192-րդ, 362-րդ, հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՌԱՖԷԼԳՐԻԳ>> փակ բաժնետիրական ընկերության հայցապահանջն ընդդեմ պատասխանող Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ <<ԱՎԱԳ ՇԻՆ 1>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ թիվ ԵՔԲՄԱՊՁԲ-24/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 02.02.2024թ. թիվ 3 արձանագրության 1.2 կետով <<ԱՎԱԳ ՇԻՆ 1>> ՍՊԸ-ի

հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ նույն արձանագրության 1.3 կետով <<ԱՎԱԳ ԾԻՆ 1>> ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Սույն դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**